ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

27.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/36

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «Արֆարմացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 07.03.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>«Արֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն 07.03.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Վ1Պ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 30.01.2019թ. թիվ 1 որոշմամբ ներկայացվել է «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար՝ դեղորայքի ձեռքբերում էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ (այսուհետ՝ Հրավեր):

Վերոնշյալ գնման հրավերի 1.1 կետով սահմանված գնման առարկայի թիվ 2-րդ, 4-րդ, 12-րդ, 13-րդ, 16-րդ, 20-րդ, 24-րդ, 25-րդ, 29-րդ, 30-րդ չափաբաժիններում ապրանքների գնման աճուրդի մասնակցության համար հայտ է ներկայացրել նաև «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

Հանձնաժողովի կողմից 14.02.2019թ. ժամը 11:00-ին կազմվել է թիվ 2 արձանագրություն ՎԱՊ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընտրված մասնակիցների որոշման մասին:

Նույն արձանագրության 7-րդ կետի համաձայն Հանձնաժողովը որոշել է Հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկներ ներկայացրած առաջին տեղը զբաղեցրած մասնակիցին ոչ ավտոմատ եղանակով ծանուցել առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի էլեկտրոնային փոստին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Գտնում ենք որ Հանձնաժողովի 14.02.2019թ. ժամը 11:00-ին կայացած թիվ 2 որոշմամբ ՎԱՊ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ, 4-րդ, 12-րդ, 13-րդ, 16-րդ, 20-րդ, 24-րդ, 25-րդ, 29-րդ, 30-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնելու որոշումը, այնուհետև որակավորման փուլ անցնելու անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.

1. Համաձայն Հրավերի 7.2 կետի Էլեկտրոնային աճուրդը սկսվում է 18.02.2019թ. ժամը 11:00-ին:

2. ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանի՝ պետական կառավարման մարմիններին ուղղված գրության համաձայն 11.02.2019թ.-19.02.2019թ. ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ,որոնց հետևանքով առաջացել է ֆորս-մաժորային իրավիճակ և հնարավոր չի եղել ապահովել սահմանված կարգավորումներին համապատասխան ընթացակարգերի անցկացումը,որի հիման վրա 19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի վերջնաժամկետ է սահմանված եղել վերոնշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ հայտարարել չեղյալ:

3. Տվյալ դեպքում էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդիրների հետևանքով Էլեկտրոնային աճուրդի հակադարձ աճուրդները 18.02.2019թ. ժամը 11:00-ից դարձել է անհնարին,որի հետևանքով «Արֆարմացիա» ՓԲԸ-ն զրկվել է ՎԱՊ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ, 4-րդ, 12-րդ, 13-րդ, 16-րդ, 20-րդ, 24-րդ, 25-րդ,

29-րդ, 30-րդ չափաբաժիններով հակադարձ աճուրդներին մասնակցելու հնարավորությունից:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի օրենքում սահմանված հասկացությունների էլեկտրոնային աճուրդ՝ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գների ներկայացման գործընթաց, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը:

5. Համաձայն «ՀՀ էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» 18 մայիսի 2017 թվականի N 534-Ն ՀՀ կառավարության որոշման հավելված 1-ի 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:»:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

Պարտավորեցնել Վ1Պ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել Վ1Պ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգը՝ 2-րդ, 4-րդ, 12-րդ, 13-րդ, 16-րդ, 20-րդ, 24-րդ, 25-րդ, 29-րդ, 30-րդ չափաբաժինների մասով:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՓԲԸ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն 18.03.2019թ. թիվ 13 գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

««Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն ՎԼՊ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով ընթացակարգի «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնում է, որ ընթացակարգի հրավերով հայտերի ներկայացման ժամկետ էր սահմանված 14.02.2018թ. ժամը 11:00: Գնահատող հանձնաժողովը 14.02.2018թ. ժամը 11:00-ին կազմել է նիստերի բացման արձանագրություն, իսկ գնահատման արձանագրությունը՝ 20.02.2019թ. ժամը 11:00-ին: ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի գրությունը էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ եկած խնդիրների վերաբերյալ ստավցել է 22.02.2019թ.: «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն ՎԼՊ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը 25.02.2019թ. չեղյալ է հայտարարել:»:

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՓԲԸ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 07.03.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՎԼՊ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, ՎԼՊ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.02.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը.

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կարիքների համար՝ դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՎԼՊ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

ՎԼՊ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սահմանվել է՝

- հրապարակման ժամանակ 2019-02-06 ժամը 19:01:57,
- հայտերի ընդունման վերջնաժամկետ 2019-02-14 ժամը 11:00:00,
- հակադարձ աճուրդ 2019-02-18 ժամը 11:00:00:

Հանձնաժողովը 25.02.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ 22.02.2019թ. ՀՀ ֆինանսների

նախարարի առաջին տեղակալի կողմից ստացվել է գրություն՝ էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ 11.02.2019թ. ժամը 09:00-ից մինչև 19.02.2019թ. ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում ի հայտ եկած խնդիրների վերաբերյալ և որոշել է 19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված ընթացակարգը հայտարարել չեղյալ:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն 07.03.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից էլետրոնային համակարգի միջոցով հայտարարված Վ1Պ-ԷԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով որակավորման փուլ անցնելու որոշումն անհիմն է, քանի որ 11.02.2019թ.-19.02.2019թ. ընկած ժամանակահատվածում E-auction համակարգում ի հայտ են եկել խնդիրներ և առաջացած խնդիրների հետևանքով 18.02.2019թ. հակատարձ աճուրդի մասնակցությունը դարձել է անհնարին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը 25.02.2019թ. հայտարարել է չկայացած:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ն 07.03.2019թ. ներկայացրած բողոքով պահանջել է ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/16 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը չեղյալ հայտարարել և Պատվիրատուի կողմից 25.02.2019թ. Աճուրդը չեղյալ է հայտարարվել, Բողոքներ քննող անձը գտնում է, որ ըստ էության արդեն իսկ կատարվել է «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 07.03.2019թ. բողոքով ներկայացված պահանջը, հետևաբար Բողոքներ քննող անձը չի անդրադառնում Բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 07.03.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ